

**Հավելված N 11**

**ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (հարկիրճ շարադրանք)<sup>1</sup>**

**1. ՈԼՈՐՏԸ**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը իրագործում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում /ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդված, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կանոնադրության 1-ին կետ/:

Մարզում կառավարության իրականացված քաղաքականությունը ուղղված է մարզի սոցիալ-տնտեսական համընդհանուր զարգացմանը, արդյունաբերության և գյուղատնտեսության արդիական ճյուղերի զարգացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և ընդլայնմանը, կրթական, մշակութային և առողջապահական տարբեր ծրագրերի իրականացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության թվի կրճատմանը և վերջապես քաղաքացու, անհատի բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

**2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի զարգացման տեսլականն է՝ ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ և ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

<sup>1</sup> Ու որոպ ին քաղաքականութայն ողջ համառոտչարտրանքը չախք է գերազանցի 6 էջի սահմանները:

1. Մինչև 2025թ. մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով մինչև 10%,
2. Մինչև 2025թ. մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում՝ 10%-ով,
3. Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

### 3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **Վայոց ձորի մարզի զարգացման երեք առաջնահերթ գերակայություններ են.**

**Զբոսաշրջության զարգացում /էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, պատմամշակութային տուրիզմ նաև տուրիզմի նոր ձևեր լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու/:** Խթանել գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացմանը՝ գյուղական տուրիզմ:

**Վերամշակող արդյունաբերության զարգացում՝** Վայոց ձորի մարզում իրատեսական է վերամշակող արդյունաբերության զարգացումը, քանի որ առկա է անհրաժեշտ աշխատուժ և հումք/գյուղմթերք,բնական պաշարներ/: Այն կնպաստի զբաղվածության ընդլայնմանը, քաղաքների զարգացմանը, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակի աճին, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանը:

**Գյուղատնտեսության մեքենայացում, արդիականացում նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանում՝** Վայոց ձորի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Սակայն ավանդական գյուղատնտեսությունը իր զարգացման հնացած մոդելով ի վիճակի չէ ապահովել համաչափ և մրցունակ զարգացում, ուստի անհրաժեշտ է խթանել նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի օգտագործման հնարավորություններ: Մեծ ծավալ ունեն չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը: Հողերի որակի բարձացման համար անհրաժեշտ է

կատարել հողերի մելորացիա: Շեշտը պետք է դրվի օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, ցանքային տարածությունների, պտղի և հատապտղի տնկարկների ավելացման և հնտենսիվ մշակությամբ այգիների հիմնման վրա:

#### 4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

5. Ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից իրականացվող ընդհանուր ծախսերը հայտերով ներկայացված են՝ բացված ըստ հիմնական ծրագրերի և ուղղությունների: